# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 9-Ա

### ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.03.2018Թ. ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է Հաստատել նիստի հետևյալ օրակարգը**

1. Խաշթառակ համայնքի 2018-2022թթ. համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ
3. ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ
5. ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 10-Ն

### ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022ԹԹ. ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը՝ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ինչպես նաև Խաշթառակ համայնքի հետ համատեղ՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության աջակցությամբ նախաձեռնել է համայնքի 2018-2022թթ. համալիր զարգացման ծրագիրը:
Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի համալիր գնահատման, առկա ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում: Այն համայնքի զարգացմանն ուղղված փաստաթուղթ է, որը հիմք է հանդիսանալու տեղական կառավարման բոլոր մակարդակներում համապատասխան քաղաքականության իրականացման համար:
Ծրագրի գաղափարախոսությունը համահունչ է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին, ՀՀ կայուն զարգացման ծրագրին, Հայաստան-ՄԱԿ զարգացման աջակցության 2016-2020թթ. ծրագրին, ՀՀ կառավարության կողմից ընդունված 2018-2020թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրին, ՀՀ Տավուշի մարզի 2017-2025թթ. զարգացման ծրագրի նախագծի դրույթներին:
Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել Խաշթառակ համայնքի 2018-2022թթ. համալիր զարգացման ծրագիրը / հավելված 1/
2. Առաջարկել Խաշթառակ համայնքի ղեկավարին միջոցներ ձեռնարկել ծրագրով նախատեսված աշխատանքները ողջ ծավալով իրականացնելու համար

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ
3. ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՔԱՄԱԼՅԱՆ ԷՐԻԿ
5. ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**